ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/156

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21» ծածկագրով բաց մրցույթ, Երևանի թվով 4 մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4397-2022 գրությամբ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 09.03.2022թ. թիվ 02/16.4/2172-2022 գրության հիման վրա, 16.03.2022թ.-ին «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 16.03.2022թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2022թ.-ի թիվ 148-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2022-2023թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 05.04.2022թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

06.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/156 համարի ծածկագիրը:

21.03.2022թ.-ին, 01.04.2022թ.-ին, 13.04.2022թ.-ին և 22.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.04.2022թ.-ին:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.03.2022թ.-ի թիվ 02/16.4/2172-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 23-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 ծածկագրով <<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>>, <<Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց>>, <<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> և <<Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է

ներկայացրել նաև <<ՀԱԷԿ-ի շինարարություն>> փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Ընկերության կողմից խախտվել են Կարգի 42-րդ և հրավերի 8.10 կետերով սահմանված պայմանները, ինչի հիման վրա վերջինիս հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 16.03.2022թ.-ի գրությամբ դիմել է «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4397-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 28.03.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 23-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 ծածկագրով «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց», «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց», «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» և «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների

ձեռքբերման գնման ընթացակարգինմասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՀԱԷԿ-ի շինարարություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ՓԲԸ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

«Ծավալաթերթի մասով - «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների ծավալաթերթի «Բացվածքներ» բաժնում մասնակցի գնային առաջարկի արդյունքում ստացվող կշիռը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հավելված N 1.2-ի մասով՝

- «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-7-րդ և 9-10-րդ տողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/,

բ) 3-4-րդ տողերով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Հ=-Պա/,

գ) 5-6-րդ և 9-10-րդ տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

- «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-7-րդ և 9-10-րդ տողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/,

բ) 3-4-րդ տողերով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Հ=-Պա/,

գ) 5-6-րդ և 9-10-րդ տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

- «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-3-րդ և 6-10-րդ տողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր,

բ) 3-րդ տողով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Հ=-Պա/,

- «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-3-րդ և 8-12-րդ փողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր,

բ) 3-րդ փողով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Н=-Па/»:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ /մինչև 28.02.2022թ./՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված շտկումները կատարվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝

Հավելված N 1.2-ի մասով՝

- «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 3-4-րդ փողերով ներկայացված արտադրողի /Завод вентилятор / մոտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ փողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63,5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

- «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 3-4-րդ փողերով ներկայացված արտադրողի / Завод вентилятор / մոտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ փողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63,5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Արդյունքում հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության

հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 23-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 ծածկագրով «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց», «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց», «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» և «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգինմասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՀԱԷԿ-ի շինարարություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

Ծավալաթերթի մասով - «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների ծավալաթերթի «Բացվածքներ» բաժնում մասնակցի գնային առաջարկի արդյունքում ստացվող կշիռը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հավելված N 1.2-ի մասով՝

- «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-7-րդ և 9-10-րդ փողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/,

բ) 3-4-րդ փողերով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Հ=-Պա/,

գ) 5-6-րդ և 9-10-րդ փողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

- «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-7-րդ և 9-10-րդ փողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/,

բ) 3-4-րդ փողերով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Հ=-Պա/,

գ) 5-6-րդ և 9-10-րդ փողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

- «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-3-րդ և 6-10-րդ փողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր,

բ) 3-րդ փողով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Հ=-Պա/,

- «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 1-3-րդ և 8-12-րդ փողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր,

բ) 3-րդ փողով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Հ=-Պա/:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ /մինչև 28.02.2022թ./՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված շտկումները կատարվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝

Հավելված N 1.2-ի մասով՝

- «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 3-4-րդ տողերով ներկայացված արտադրողի /Завод вентилятор/ մոտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ տողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63,5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

- «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝

ա) 3-4-րդ տողերով ներկայացված արտադրողի /Завод вентилятор/ մոտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ տողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63,5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Արդյունքում հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/102 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Ինչպես արդեն նշել ենք, «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտ մերժելու համար հիմք են հադիսացել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված հետևյալ անհամապատասխանությունները.

ա) 3-4-րդ տողերով ներկայացված արտադրողի / Завод вентилятор / մոտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել

Այս կապակցությամբ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտով այս չափաբաժինների համար ի սկզբանե ներկայացրել է արտադրող AMX, և չի նշել մոդել, քանի որ այդ մոդելը բացակայել է /առկա չի եղել/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որպես հրավերի նկատմամբ շտկում պահանջող անհամապատասխանություն արձանագրել է հետևյալը՝ 1-7-րդ և 9-10-րդ տողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/:

Հաշվի առնելով, որ ՓԲԸ-ի կողմից առաջարկված AMX ընկերության արտադրության կանալային օդամուղները չունեին մոդելներ, «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն 3-րդ և 4-ր չափաբաժինների մասով ստիպված փոխել է արտադրողին, որպեսզի կարողանա նշել մոդել, և որպես արտադրող նշելով՝ Завод ВЕНТИЛЯТОР ООО, իսկ որպես մոդել նշելով՝ GDF 600x350-43:

Ուսումնասիրելով 3-4 տողերով ներկայացրած Завод ВЕНТИЛЯТОР ООО արտադրության GDF 600x350-4 մոդելի կանալային օդամուղները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ /Завод вентилятор/ մուտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել, ինչը հիմք է հանդիսացել մասնակցի հայտը մերժելու համար:

Այս կապակցությամբ, նախ հայտնում ենք, որ ի սկզբանե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պահանջը՝ 3-4 տողերով ներկայացրած կանալային օդամուղներով մոդել ներկայացնելու վերաբերյալ, եղել է ոչ իրավաչափ:

Մասնավորապես, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ըստ Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի, հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի և հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակի՝ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Տվյալ պարագայում «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից ի սկբանե 3-4 տողով ներկայացված AMX ընկերության արտադրության սարքավորումների համար չի նշել տվյալ սարքավորումների մոդելները՝ դրանց բացակայությամբ պայմանավորված:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման իմպերատիվ պահանջ ներկայացնելուց հետո ՓԲԸ-ն ստիպված կատարել է շտկում, փոխել արտադրողին, որպեսզի կարողանա նշել սարքավորման մոդել:

Նման պարագայում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ որպես թերություն, անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրելով 3-4 տողերով սարքավորումների մոդելները չնշելը՝ գործել է ոչ իրավաչափ՝ քանի որ հենց Ընթացակարգի հրավերն է ամրագրել, որ սարքավորման մոդելը նշվում է միայն առկայության դեպքում:

Նման պարագայում գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ ոչ իրավաչափ շտկման արդյունքում առաջացել է բացասական հետևանք, քանի որ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն կանգնել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև, քանի որ եթե հանձնաժողովը գործեր իրավաչափ, ապա վերոհիշյալ իրավիճակը վրա չէր հասնի:

Բացի այդ խնդրում ենք նկատի ունենալ ևս մեկ կարևոր փաստ: «Ցելսիուս» ՍՊԸ-ի (հանդիսանում է Завод ВЕНТИЛЯТОР ООО և Ровен ընկերությունների ապրանքատեսակի մատակարարը) կողմից 02.03.2022թ. տրված տեղեկանքի (կցվում է) համաձայն՝ Завод ВЕНТИЛЯТОР ООО կողմից արտադրվող կանալային օդամուղները արտադրվում են ինչպես ВКП, այնպես էլ GDF մակնշմամբ: «Ցելսիուս» ՍՊԸ-ի կողմից Завод ВЕНТИЛЯТОР ООО ներկայացրած պահանջներին համապատասխան՝ արտադրողի կողմից առաջարկվել է նշված մոդելի՝ GDF 600x350-43 կանալային օդամուղ:

բ) 7-րդ տողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63,5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին

Ինչպես նշվեց նախորդ կետում, «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտով 7-րդ չափաբաժնի համար ի սկզբանե ներկայացրել է արտադրող Midea, և չի նշել մոդել, քանի որ այդ մոդելը բացակայել է /առկա չի եղել/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որպես հրավերի նկատմամբ շտկում պահանջող անհամապատասխանություն արձանագրել է հետևյալը՝ 1-7-րդ և 9-10-րդ տողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/:

Հաշվի առնելով, որ ՓԲԸ-ի կողմից առաջարկված Midea ընկերության արտադրության ջերմափոխանակիչի չի ունեցել մոդել, «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն 7-րդ չափաբաժնի մասով սխալված փոխել է արտադրողին, որպեսզի կարողանա նշել մոդել, և որպես արտադրող նշելով՝ Ровен, և մոդելէ TFT 600X350-3: Միևնույն ժամանակ այդ տողով սարքավորման տեխնիկական բնութագրով ջերմարտադրողականությունը նշվել է հրավերով պահանջված 63,5 կՎտ:

Ուսումնասիրելով 7-րդ ներկայացրած Ровен ընկերության արտադրության ՝ TFT 600X350-3 մոդելի ջերմափոխանակիչը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/

անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63,5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Այս կապակցությամբ, նախ հայտնում ենք, որ ի սկզբանե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պահանջը՝ 7-րդ ներկայացրած ջերմափոխանակիչի մասով մոդել ներկայացնելու վերաբերյալ, եղել է ոչ իրավաչափ:

Մասնավորապես, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ըստ Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի, հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի և հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակի՝ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Տվյալ պարագայում «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից ի սկբանե 7-րդ տողով ներկայացված Midea ընկերության արտադրության սարքավորման համար չի նշել տվյալ սարքավորման մոդելը՝ դրա բացակայությամբ պայմանավորված:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման իմպերատիվ պահանջ ներկայացնելուց հետո ՓԲԸ-ն ստիպված կատարել է շտկում, փոխել արտադրողին, որպեսզի կարողանա նշել սարքավորման մոդել:

Նման պարագայում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ որպես թերություն, անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրելով 7-րդ տողով սարքավորման մոդելը չնշելը՝ գործել է ոչ իրավաչափ՝ քանի որ հենց Ընթացակարգի հրավերն է ամրագրել, որ սարքավորման մոդելը նշվում է միայն առկայության դեպքում:

Նման պարագայում գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ ոչ իրավաչափ շտկման արդյունքում առաջացել է բացասական հետևանք, քանի որ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն կանգնել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև, քանի որ եթե հանձնաժողովը գործեր իրավաչափ, ապա վերոհիշյալ իրավիճակը վրա չէր հասնի:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նկատի ունենալ, որ ՓԲԸ-ն պարտավորվել է տեղադրել Ընթացակարգի հրավերի պահանջներին լիավոին համապատասխանող սարք՝ նշելով ջերմարտադրողականությունը 63,5 կՎտ-ի, ինչը լիովին համապատասխանում է հրավերի պահանջներին:

Եվ այս տեսանկյունից հանձնաժողովի ինչ-որ եզրակացություն՝ արված մոդելի հետ կապված, հիմնավոր չէ, քանի որ վերջին հաշվով եթե անգամ մոդելի վերաբերյալ

ինտերնետ կայքերում առկա են ինչ-որ տեղեկություններ, ապա պետք է փաստել, որ ապադրողները հաճախ սարքավորումներ են արտադրում պատվիրատուի կողմից հանձնարարված կոնկրետ պարամետրերով: Այլ կերպ ասած, եթե «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն 7-րդ տողով պարտավորվել էր տեղադրել հրավերի պահանջներին համապատասխանող սարքավորում, ապա դրան անհամապատասխանությունը կարելի էր փաստել բացառապես սարքավորումը մատակարարելու և տեղադրելու փուլում, երբ տեսանելի լիներ տվյալ սարքավորումը և ակնհայտ դառնար դրա անհապատասխանությունը: Սայան այս փուլում, երբ սարքերը առկա չեն, գտնում ենք, որ անհամապատասխանայության վերաբերյալ արված եզրահանգումը վաղ է:

Բացի այդ խնդրում ենք նկատի ունենալ ևս մեկ կարևոր փաստ: «Յելսիուս» ՍՊԸ-ի (հանդիսանում է Завод ВЕНТИЛЯТОР ООО և Ровен ընկերությունների ապրանքատեսակի մատակարարը) կողմից 02.03.2022թ. տրված տեղեկանքի համաձայն՝ ներկայացրած Ровен ընկերության կողմից արտադրվող TFT 600X350-3 մոդելի ջերմափոխանակիչը, պահպանելով իր արտաքին պարամետրերը, արտադրվում է 43-ից 84 Կվտ հզորությամբ:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/156 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևանի թվով 4 մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 23.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ

հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 15.02.2022թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ մասի համաձայն:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.02.2022թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ. Մասնավորապես՝

1. Ծավալաթերթի մասով

«Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների ծավալաթերթի «Բացվածքներ» բաժնում մասնակցի գնային առաջարկի արդյունքում ստացվող կշիռը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

2. Հավելված N 1.2-ի մասով

«Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների՝

ա) 1-7-րդ և 9-10-րդ տողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/,

բ) 3-4-րդ տողերով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Н=—Պա/,

գ) 5-6-րդ և 9-10-րդ տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

«Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների՝

ա) 1-7-րդ և 9-10-րդ տողերում ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր կամ արտադրող/,

բ) 3-4-րդ տողերով ներկայացված տեխնիկական բնութագրերը թերի են /նշված չէ Н=—Պա/,

գ) 5-6-րդ և 9-10-րդ տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

«Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների՝

ա) 1-3-րդ և 6-10-րդ տողերով ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր/,

բ) 3-րդ տողով ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է /նշված չէ Н=—Պա/:

«Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահիճի կառուցման աշխատանքների՝

ա) 1-3-րդ և 8-12-րդ տողերով ներկայացված չեն մոդելները /մոդելի փոխարեն մոդելի սյունակում նշված է տեխնիկական բնութագիր/,

բ) 3-րդ տողով ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է/նշված չէ Н=—Պա/:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (28.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 25.02.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի vahanzakyan@haekshin.am էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 01.03.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ. Մասնավորապես՝

1. Հավելված N 1.2-ի մասով՝

«Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների՝

ա) 3-4-րդ տողերով ներկայացված արտադրողի /Завод вентилятор/ մոտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ տողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմաարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63.5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների՝

ա) 3-4-րդ տողերով ներկայացված արտադրողի /Завод вентилятор/ մոտ ներկայացված մոդե|ր /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ տողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմաարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63.5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման ընթացակարգի հրավերի 8.10-րդ, ինչպես նաև Կարգի 42-րդ կետերի պահանջները, որոշել է «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ix. «Завод вентилятор» ընկերության կողմից 04.04.2022թ.-ին տրված թիվ 0404-128 գրության համաձայն՝ «Предприятие Завод ВЕНТИЛЯТОР комплектует и осуществляет поставки широкого спектра оборудования для вентиляционных систем. Настоящим подтверждаем, что предприятием производятся канальные вентиляторы как с маркировкой ВКП, так и с GDF. Завод ВЕНТИЛЯТОР нацелен на обеспечение комфортных условий взаимодействия для клиентов.»:

x. «Ровен» ընկերության կողմից 05.04.2022թ.-ին տրված թիվ 05-04/22-Т/об. գրության համաձայն՝ Основная задача компании «Ровен» - поставка продукции высокого качества, комплексно учитывая интересы и потребности клиентов, сроки и цены. Сохраняя внешние параметры теплообменника модели TFT 600x350-3 «Ровен» производит теплообменники, мощностью с 43 до 84 кВт. Вся продукция производства ГК РОВЕН сертифицирована в соответствии с действующими нормами и стандартами.

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4397-2022 գրությամբ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը: Իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

Նույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն

դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևանի թվով 4 մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 23.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

- իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների անձնագրային տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխա-

նություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևանի թվով 4 մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 23.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21» ծածկագրով բաց մրցույթին հայտ ներկայացրած «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչով պայմանավորած Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 28.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 25.02.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի vahanzakyan@haekshin.am էլ. փոստի հասցեին: Հանձնաժողովի 01.03.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ. Մասնավորապես՝

1. Հավելված N 1.2-ի մասով՝

«Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների՝

ա) 3-4-րդ տողերով ներկայացված արտադրողի /Завод вентилятор/ մոտ ներկայացված մոդելը /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ տողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմաարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63.5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների՝

ա) 3-4-րդ տողերով ներկայացված արտադրողի /Завод вентилятор/ մոտ ներկայացված մոդե|ր /GDF 600x350-43/ չի հայտնաբերվել,

բ) 7-րդ տողով ներկայացված արտադրողի /Ровен/ մոտ նշված մոդելի /TFTc600x350-3/ անձնագրային տեխնիկական բնութագրով ջերմաարտադրողականությունը կազմում է 43 կՎտ՝ պահանջվող 63.5 կՎտ-ի փոխարեն, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«Завод вентилятор» ընկերության կողմից 04.04.2022թ.-ին տրված թիվ 0404-128 գրության համաձայն՝ «Предприятие Завод ВЕНТИЛЯТОР комплектует и осуществляет поставки широкого спектра оборудования для вентиляционных систем. Настоящим подтверждаем, что предприятием производятся канальные вентиляторы как с маркировкой ВКП, так и с GDF. Завод ВЕНТИЛЯТОР нацелен на обеспечение комфортных условий взаимодействия для клиентов.»:

«Ровен» ընկերության կողմից 05.04.2022թ.-ին տրված թիվ 05-04/22-Т/об. գրության համաձայն՝ Основная задача компании «Ровен» - поставка продукции высокого качества, комплексно учитывая интересы и потребности клиентов, сроки и цены. Сохраняя внешние параметры теплообменника модели TFT 600x350-3 «Ровен» производит теплообменники, мощностью с 43 до 84 кВт. Вся продукция производства ГК РОВЕН сертифицирована в соответствии с действующими нормами и стандартами.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով Հանձնաժողովի 01.03.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանություններն ու «Завод вентилятор» և «Ровен» ընկերությունների կողմից տրված տեղեկանքները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի՝ ընկերության հայտը մերժելու մասին կայացված արձանագրությունն ոչ

իրավաչափ է, մասնավորապես՝ Հանձնաժողովը վերոնշյալ ընկերությունների կողմից տրամադրված տեղեկանքներով հերքվում է և ապացուցվում, որ Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.2-ում առկա տվյալները համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահաջներին ու պայմաններին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4397-2022 գրությամբ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/156 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**